



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Սարչապետ համայնք, գ. Սարչապետ,
Հեռ. (077)867459 , sarchapet.loiri@mta.gov.am

N 193-16
27 դեկտեմբեր 2016թ.

ԼՈՒՈՒ ՄԱՐԶԱՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶԱՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Սարչապետ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (ՀՀԶԾ) 2017-2021թթ.:

Առդիր՝ 21 էջ և 2 Excel ֆայլ:

Համայնքի ղեկավար՝

Բորիս Բարոյան

Կապ.՝



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N-42-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԳԱՄՅԱ /2017-2021թթ./ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով և 53-րդ հոդվածով՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել Սարչապետ համայնքի զարգացման հնգամյա (2017-2021թթ.) ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

3. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ

5. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ

6. ՄԽՈՅԱՆ ՍԵՅՐԱՆ

7. ՏՈՄԵՅԱՆ ՆՈՐԱՅՐ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ ՍԱՐԶԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
2017-2021ԹԹ.**



ԿԱԶՄԵՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Հաստատվել է ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 42-Ն որոշմամբ

ՍԱՐԶԱՊԵՏ-2016թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական վիճակը.....	5, 6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	6, 7
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.....	8
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	9, 10
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈԻԹՀՍ) վերլուծություն.....	11, 12
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	13
3.1. Համայնքի զարգացման տեսլական.....	13, 14
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	14 - 19
4. ՀՀԶԾ ֆինանսավորում.....	20
5. ՀՀԶԾ մոնիթորինգ.....	20

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (ՀՀԶԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում և ՀՀԶԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները: ՀՀԶԾ-ն մշակելիս հաշվի են առնվել համայնքի ֆինանսական կարողությունը, համայնքի բնակչության թվաքանակը, համայնքի ուժեղ և թույլ կողմերը, ՀՀԶԾ-ի կազմման վերաբերյալ կազմակերպված հանրային քննարկումների արձանագրության արդյունքները:

Համայնքի հիմնական խնդիրներն են գյուղատնտեսության ոլորտում՝ գյուղտեխնիկայի պակասը, անբարենպաստ կլիման, հողերի վատորակ լինելը, գյուղատնտեսական արտադրանքի իրացման կազմակերպման խնդիրը /կաթի ցածր գին, մսամթերքի իրացում և այլն/, արտագաղթի պատճառով երիտասարդ աշխատուժի պակասը: Արտագաղթը նաև իր բացասական ազդեցությունն է թողնում համայնքի բյուջեի սեփական եկամուտների կատարման ցուցանիշների վրա: Հողի և գույքի սեփականատերերի բացակայության պատճառով հնարավոր չէ իրականացնել հարկային պարտավորությունների լիարժեք հավաքագրումը:

Համայնքի զարգացման ուղղություններն ու ոլորտներ են բնակչության կենսամակարդակի բարձրացում, գյուղատնտեսության ոլորտ և մշակույթի ու սպորտի բնագավառների զարգացում:

Համայնքի տեսլականն է՝

Համայնքը հնարավորինս դարձնել բնակչության համար բավարար կենսապայմաններ և գյուղատնտեսությամբ զբաղվելու պայմաններ ունեցող, դպրոցահասակների և պատանիների զբաղվածության ապահովմամբ՝ բարեկեցիկ բնակավայր:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Սարչապետ համայնքը գտնվում է Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 16 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 68 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաքից՝ 176 կմ: Համայնքը սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը: Հարևան համայնքներն են Պրիվոլնոյե, Արծնի, Նորաշեն Լեռնահովիտ:

Սարչապետ համայնքը կազմավորվել է 19-րդ դարի 20-30-ական թվականներին: Բնակչության հիմնական մասը գաղթել է Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Մոլեսման գյուղից, որտեղից էլ տեղահանվել են 1826-1828թթ. Ռուս-Պարսկական պատերազմի օրերին:

Համայնքը կրում է Սարչապետ անվանումը, որը երբևէ փոփոխության չի ենթարկվել և որի ծագումնաբանությունը հայտնի չէ:

Համայնքի բարձրությունը ծովի մակարդակից 1705 մետր է: Բնակավայրի ռելիեֆը լեռնային է, խիստ էռոզացված, ամռանը զով է, ձմռանը՝ չափավոր ցուրտ: Ձմռան տևողությունը 202 օր է, իսկ ամռանը՝ 163 օր: Տարեկան միջին ջերմաստիճանը 3.6°C է, իսկ առավելագույնը՝ $+28^{\circ}\text{C}$ - 30°C : Տարեկան տեղումների քանակը 700-720մմ է: Առանձին տարիներին երաշտ է լինում:

Կարկտային օրերի թիվը կազմում է 20-25 օր:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2216.18 հա:

Սարչապետ համայնքը հանրապետական, մարզային և այլ ճանապարհներ չեն հատում:

Սարչապետ համայնքի բնակչության ընդհանուր թիվը կազմում է 2190 մարդ, այդ թվում՝

իգական	1126
արական	1064
0-18 տարեկան	490
18-62 տարեկան	1318
63 և ավել տարեկան	382
փախստականներ	0
թոշակառուներ	373
Տնային տնտեսությունների թիվը	574

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական վիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն

2015թ.	2016թ.
Փաստացի 42964.8	Կանխատեսվող 45570.0

- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժին

2015թ.	2016թ.
18.7%	16%

- Համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունները

Համայնքում արդյունաբերական ձեռնարկություններ չկան:

- Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները, հիմնական սպառման շուկաներ

Համայնքում գյուղատնտեսությամբ զբաղվողները արտադրում են՝ կաթ, միս, ձու, մեղր և աճեցնում՝ կարտոֆիլ, ցորեն, գարի և բանջարեղեն, որը հիմնականում օգտագործվում է սեփական կարիքների բավարարման համար:

- Զբոսաշրջանային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ

Համայնքում պատմական և մշակութային հուշարձաններ չկան:

Համայնքի հյուսիսային մասում է գտնվում Վիրահայոց լեռնաշղթայի՝ բարձրությամբ երկրորդ, Լոք սարը:

Լոք սարի վրա կա մատուռ, ուր ամեն տարի մայիս ամսին կատարվում է ուխտագնացություն՝ <<Հիսուսի համբարձման օրը>>, սակայն զբոսաշրջիկների կողմից այցելություններ չկան:

- Դպրոցական, նախադպրոցական հաստատություններ

Համայնքն ունի մեկ միջնակարգ դպրոց, որը նախատեսված է 640 հոգու համար, սակայն մեծ արտագաղթի պատճառով, այս պահին դպրոցում սովորում են ընդամենը 169 աշակերտներ, աշխատողների թվաքանակը

29-ն է, որից 5-ը այլ համայնքներից են: Դպրոցում առկա է կենտրոնացված ջեռուցում, սանհանգույց, շուրջօրյա ջրամատակարարում, համակարգչային դասարան, գրադարան և գրեթե առկա են բոլոր անհրաժեշտ պայմաններն ու պարագաները՝ դասերը լիարժեք անցկացնելու համար:

Համայնքում առկա է 90 տեղանոց մանկապարտեզի շենք, որը չի ծառայում իր նպատակին, գտնվում է կիսավեր վիճակում և ենթակա է հիմնովին վերանորոգման: 2013 թվականի ապրիլ ամսից համայնքում գործում է <Պարտեզ> մանկապարտեզը, որը նախատեսված է 32 հոգու համար և այս պահին հաճախում են նախադպրոցական տարիքի թվով 32 երեխաններ, աշխատողների թվաքանակը 6-ն է, բոլորն էլ համայնքից են: Այն գտնվում է դպրոցի շենքում: Մանկապարտեզի գործունեության համար առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները:

- Առողջապահական հաստատություններ

Համայնքն ունի բուժկետ, որը սկսել է գործել 2004թ.-ից: Բուժկետն ունի մեկ աշխատող /բուժքույր/, համապատասխան գույք, սարքավորումներ, դեղանյութեր՝ առաջին բուժօգնություն ցույց տալու համար:

Համագործակցում է <World vision> բարեգործական կազմակերպության հետ, վերջինիս կողմից համայնքի բնակչության հետ անցկացվում են բազմաթիվ դասընթացներ՝ առողջապահական թեմաներով:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ

Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 113 ընտանիք:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Համայնքում գալիք հինգ տարների համար՝ պետության, մարզային, միջազգային դոնոր կազմակերպությունների և տեղացի բարերարների ներդրումներով ակնկալվող հետևյալ ծրագրերի և միջոցառումների իրականացումը.

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, դիզվառելանյութի, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերում, գյուղատնտեսական /երկարաժամկետ, ցածր տոկոսադրույքով/ վարկերի տրամադրում, սեզոնային զբաղվածության խթանման աջակցություն, ինչն էլ կնպաստի գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը և կհանգեցնի արտադրական արդյունքների ավելացմանը
- Մշակույթի տան դահլիճի / բեմ, նստատեղեր, հատակ, պատուհան, դուռ, ջեռուցում և այլն/ վերանորոգում, համապատասխան տեխնիկայի

ձեռքբերում, ինչի արդյունքում կունենանք գործող մշակույթի կենտրոն,
որտեղ կանցկացվեն տարբեր միջոցառումներ, կգործեն խմբակներ:
Այսպիսով որոշ չափով կլուծվի համայնքի բնակչության զբաղվածության
խնդիրը

- Մարզահրապարակների ու մարզասրահի կառուցում՝ կստեղծվեն
պայմաններ համայնքի պատանիների սպորտային զարգացվածությունը
բարձրացնելու ուղղությամբ
- Համայնքի խմելու ջրի ջրագծի կառուցումն ավարտին հասցնելը՝
արդյունքում 100% -ով կլուծվի համայնքում խմելու ջրի խնդիրը, որն էլ
կնպաստի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը
- Գիշերային լուսավորության լուսատուների փոխարինումը նոր
էներգախնայող լուսատուներով, որը հնարավորություն կտա տնտեսել
համայնքի բյուջեի ծախսերը

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	2016	2017	2018	2019	2020	2021
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	47061.1	48117.7	47924.0	47851.0	47931.0	48631.0
Հողի հարկ	2933.1	3031.6	2901.0	2853.0	2503.0	2003.0
Գույքահարկ	4531.3	4396.7	4200.0	4100.0	4050.0	4000.0
Վարձավճար	420.0	420.0	420.0	420.0	420.0	420.0
Տեղ. տուրք	268.0	280.0	288.0	288.0	328.0	328.0
Այլ եկամուտներ	510.0	660.0	660.0	660.0	830.0	880.0
Ընդամենը սեփ. եկամուտներ	8662.4	8736.3	8469.0	8321.0	8131.0	7631.0
Դոտացիա	38398.7	39381.4	39455.0	39530.0	39800.0	41000.0
ԾԱԽՍԵՐ	54568.8	53531.7	52924.0	52351.0	52731.0	54131.0
Կառավ. ապարատ. ծախսեր	35368.9	30441.0	28000.0	29200.0	28871.0	29401.0
Տրանսպորտային կապ	2300.0	1300.0	1500.0	1700.0	1800.0	2000.0
Բնակ. շինություն	890.0	620.0	820.0	920.0	1020.0	1120.0
Հանգիստ, մշակույթ, կրոն	2800.0	3400.0	5500.0	5250.0	6300.0	6600.0
Կրթություն	10000.0	12000.0	11900.0	11000.0	11200.0	11450.0
Սոցիալական պաշտպան.	1370.0	1300.0	1420.0	1450.0	1480.0	1500.0
Այլ խմբեր /պահուստային/	0	2530.7	1844.0	2065.1	0	0
Աղքատիություն	800.0	900.0	900.0	900.0	1000.0	1000.0
Ընդ. քնույթի հանր. ծառայություն	1040.0	1040.0	1040.0	1050.0	1060.0	1060.0

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Ստորև ներկայացնում ենք համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրները՝ իրենց լուծման խոչընդոտներով և դժվարություններով.

- արդյունաբերական ձեռնարկությունների բացակայություն

համայնքի աշխարհագրական անբարենպաստ դիրք և ցուրտ կլիմա, ֆինանսական միջոցների բացակայություն և արտադրանքի իրացման խնդիր

- գյուղատնտեսությամբ զբաղվելու անհեռանկարայնություն

հողերի վատորակ լինելը, ցածր բերքատվությունը, երիտասարդ աշխատուժի բացակայությունը, ծախսերի եկամուտներին գերազանցելու հանգամանքը

- գյուղտեխնիկայի բացակայությունը

համայնքի սուղ բյուջե, այլ միջոցների բացակայություն

- կարկտակայանների բացակայություն

համայնքի սուղ բյուջե, այլ միջոցների բացակայություն

- զբոսաշրջության զարգացման հեռանկար չունենալը

պատմամշակութային հուշարձանների և վայրերի բացակայությունը, համայնքի դիրքը

- մասսայական արտագաղթը

աշխատատեղերի բացակայությունը, գյուղատնտեսությամբ զբաղվելու անարդյունավետությունը

- զբաղվածության խնդիրը

գործող ստեղծագործական և այլ խմբակների բացակայությունը, աշխատատեղերի պակասը, մշակույթի տան ոչ բարվոք վիճակը

- սպորտհրապարակների և խաղահրապարակների բացակայությունը

համայնքի սեղմ բյուջե, այլ միջոցների բացակայություն

- համայնքի փոքր բյուջեն

հարկային պարտավորությունների հավաքագրման ցածր ցուցանիշները /սեփականատերերի բացակայության պատճառով/, պետության կողմից տրամադրվող ցածր դոտացիան

- ներհամայնքային ճանապարհների վիճակը

ջրատարերի և սելավատարերի բացակայությունը, անասֆալտապատ լինելը

- ջրահեռացման և ոռոգման համակարգերի բացակայությունը

համայնքի սուղ բյուջե, այլ միջոցների բացակայություն

և բազմաթիվ այլ խնդիրներ, որոնք ևս ծագում են վերը նշված դժվարություններից և խոչնդոտներից:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹԵՂ ԿՈՂՄԵՐԸ	ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
• Համայնքում միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի գործելը • Բուժկետի առկայությունը • Դպրոցում, մանկապարտեզում, բուժկետում և համայնքապետարանում ջեռուցման համակարգի առկայությունը • Եկեղեցու գործելը • Առևտրի կետերի առկայությունը • Փոստի, բջջային հեռախոսակապի, ինտերնետի, հեռուստատեսության, երթուղային տրանսպորտի առկայությունը • Տարածաշրջանին կապող ասֆալտապատ ճանապարհի առկայությունը • Էլեկտրաէներգիայի, բնական գազի ապահովվածությունը • Աղբահանության, գիշերային լուսավորության առկայությունը • Պահուստային հողերի առկայությունը • Առաջին արձագանքման համայնքային թիմի առկայությունը	• Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը • Անբարենպաստ կլիման և աշխարհագրական վատ դիրքը • Զրահեռացման կենտրոնացված համակարգի բացակայությունը • Ոռոգման ջրի համակարգի բացակայությունը • Խմելու ջրի /համայնքի մի մասի/ անապահովվածությունը • Սպառման շուկայի անհասանելիությունը • Մարզասրահի և սպորտ հրապարակների բացակայությունը • Կարի ֆաբրիկայի չգործելը • Գյուղատնտեսական տեխնիկայի պակասը • Մշակույթի տան դահլիճի աննորոգ վիճակը • Խաղահրապարակների բացակայությունը

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ
• Պահուստային հողերի օգտագործում • Աշխատուժի առկայություն • Փոխառու միջոցների ներգրավման հնարավորություններ • Խմելու ջրի ջրագծի շարունակության կառուցման հնարավորություն • <World vision>-ի և Կարմիր խաչի հետ համագործակցության հնարավորությունները	• Աշխատուժի արտահոսք • Մասսայական արտագաղթ • Ծնելիության նվազում • Հարկային պարտավորությունների կատարման վատ վիճակը • Համայնքում գյուղատնտեսությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը • Հողագործությամբ չզբաղվելը • Բնական աղետներ /կարկտահարություն, երաշտ և այլն/

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականը ՀՀԶԾ-ի իրականացման արդյունքում.

Համայնքում հինգ տարիների ընթացքում տեղի կունենան մի շարք դրական փոփոխություններ: Կգործի հիմնովին վերանորոգված, ջեռուցված և նորագույն տեխնիկայով ապահովված մշակույթի տունը, որտեղ կանցկացվեն բազմաթիվ միջոցառումներ և կգործեն ստեղծագործական խմբակներ: Կգործի մարզասրահ համապատասխան գույքով, որտեղ համայնքի սպորտասեր հասարակությունը հնարավորություն կունենա զարգացնել և կատարելագործել իր սպորտային կարողությունները: Համայնքը կունենա անհրաժեշտ գյուղտեխնիկա, որը կնպաստի գյուղատնտեսական աշխատանքների ժամանակին և արդյունավետ կազմակերպմանը և գյուղատնտեսական արտադրանքի 5-6% աճի ավելացմանը: Համայնքի փողոցները կլուսավորվեն գիշերային էներգախնայող լուսատուներով, ինչը հնարավորություն կընձեռնի կրճատել գիշերային լուսավորության ծախսերը ավելի քան 50%-ով և դրանք ուղղել մեկ այլ խնդրի լուծմանը: Համայնքը կունենա խմելու ջրի շուրջօրյա ջրամատակարարում և համայնքում 100%-ով լուծված կլինի խմելու ջրի կարևորագույն խնդիրը:

Համայնքի զարգացման հիմնական ուղղությունները և դրանց զարգացման խթանները.

- Համայնքի բնակիչների զբաղվածության ապահովում

Մշակույթի տան վերանորոգում, համապատասխան տարածքի տրամադրում

- Համայնքի պատանիների սպորտային զարգացվածության բարձրացում

Մարզահրապարակների ու մարզասրահի կառուցում

- Գյուղատնտեսության զբաղվածության աճի բարձրացում

Պարարտանյութերի, դիզվառելանյութի, սերմացուի հնարավորինս մատչելի գներով ձեռքբերում, գյուղատնտեսական /երկարաժամկետ, ցածր տոկոսադրույքով/ վարկերի, գյուղտեխնիկայի ձեռքբերում

- Համայնքի բյուջեի ծախսերի կրճատում

Գիշերային լուսավորության լուսատուների փոխարինումը նոր էներգախնայող լուսատուներով

- Բնակչության կենսամակարդակի բարձրացում

Համայնքի խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի կառուցումն ավարտին հասցնելը

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

- Աղքատության ցուցանիշի կրճատում և գյուղատնտեսության զարգացման խթանում՝ գյուղատնտեսական անհրաժեշտ տեխնիկայի ձեռքբերման միջոցով
- Դպրոցահասակ երեխաների զբաղվածություն և մշակութային առօրյայի ձևավորում՝ մշակույթի տան դահլիճի և հարակից սենյակների հիմնովին վերանորոգման, կահավորման, ջեռուցման միջոցով
- Համայնքի բնակչության սպորտային պատրաստականության նպաստում՝ մարզասրահի և մարզահրապարակների կառուցում
- Համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ խմելու ջրի ջրամատակարարման համակարգի ներքին ցանցի շարունակության կառուցում
- Համայնքի բյուջեի ծախսերի կրճատում՝ գիշերային լուսավորության լուսատուների փոխարինումը նոր էներգախնայող լուսատուներով

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Գյուղատեխնիկայի ձեռքբերում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղատնտեսության զարգացում, գյուղատնտեսական արտադրանքի ավելացում						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի ապահովումը անհրաժեշտ գյուղատեխնիկայով						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
		30	0	15	10	5	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
		30	0	15	10	5	0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ստանալ պետության և որևէ դոնոր կազմակերպության աջակցությունը ծրագրի համաֆինանսավորման համար 1.2. Գտնել գյուղատեխնիկա մատչելի գներով						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 30 մլն. ՀՀ դրամ Ընդհանուր բյուջեն՝ 30 մլն. ՀՀ դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բարերարների ներգրավում, պետության աջակցություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2020թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Գյուղատեխնիկայի բացակայության պատճառով համայնքի բնակչության մեծամասնությունը չի հասցնում ժամանակին կազմակերպել գյուղատնտեսական աշխատանքները /վար, ցանքս, հունձ, բերքահավաք և այլ աշխատանքներ/: Ինչի հետևանքով անմշակ է մնում հողատարածքների զգալի մասը, ուստի ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր կլինի լուծել նշված խնդիրները						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Մշակույթի տան մասնակի վերանորոգում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ակտիվ մշակույթային կյանքի կազմակերպում						
Ծրագրի անմիջական նպատակ	Մշակույթի տան հարմարավետ դահլիճ և պայմաններ ունենալ						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
		70	14	14	14	14	14
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
		70	14	14	14	14	14
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռքբերում 1.2.Աշխատանքների կազմակերպում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 5 մլն. ՀՀ դրամ Կապիտալ ծախսեր՝ 65 մլն. ՀՀ դրամ Ընդհանուր բյուջեն՝ 70 մլն. ՀՀ դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ֆինանսական միջոցների ձեռքբերում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մշակույթի տան դահլիճի / բեմ, նստատեղեր, հատակ, պատուհան, դուռ, ջեռուցում և այլն/ վերանորոգում, համապատասխան տեխնիկայի ձեռքբերում, ինչի արդյունքում կունենանք գործող մշակույթի կենտրոն, որտեղ կանցկացվեն տարբեր միջոցառումներ, կգործեն խմբակներ: Այսպիսով որոշ չափով կլուծվի համայնքի բնակչության զբաղվածության խնդիրը						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Մարզասրահի և մարզահրապարակի կառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ակտիվ սպորտային կյանքի կազմակերպում						
Ծրագրի անմիջական նպատակ	Մարզվելու համար հարմարավետ սրահ և մարզահրապարակ ունենալ						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
		20	0	5	5	5	5
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
			0				
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
		20	0	5	5	5	5
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Համապատասխան տարածքի ձեռքբերում 1.2. Անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռքբերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Աշխատանքների կազմակերպում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 3 մլն ՀՀ դրամ Կապիտալ ծախսեր՝ 17 մլն. ՀՀ դրամ Ընդհանուր բյուջեն՝ 20 մլն. ՀՀ դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Տարածքի ձեռքբերում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների անբավարարություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մարզահրապարակների ու մարզասրահի կառուցում՝ կատեղծվեն պայմաններ համայնքի պատանիների ակտիվ սպորտային կյանքի կազմակերպման համար						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Գիշերային լուսավորության լուսատուների փոխարինում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բյուջեի ծախսերի կրճատում						
Ծրագրի անմիջական նպատակ	Բյուջեի ծախսերի կրճատում և գիշերային առավել վառ լուսավորություն ապահովելու համար						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
		5	1	1	1	1	1
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
		5	1	1	1	1	1
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Էներգախնայող լուսատուների ձեռքբերում 1.2.Լուսատուների փոխարինման աշխատանքների կազմակերպում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 5մլն ՀՀ դրամ Ընդհանուր բյուջեն՝ 5մլն. ՀՀ դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների անբավարարություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Գիշերային լուսավորության լուսատուների փոխարինումը նոր էներգախնայող լուսատուներով, որը հնարավորություն կտա տնտեսել համայնքի բյուջեի ծախսերը և ունենալ առավել արդիական գիշերային լուսավորություն						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի կառուցում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակիչներին 100%-ով խմելու ջրով ապահովում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ունենալ խմելու ջրի շուրջօրյա ջրամատակարարում						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
		60	20	20	20	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային	Թիրախային արժեքներ				
		արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
		60	20	20	20	0	0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Ջրագծի ցանցի կառուցում 1.2. Շինարարական աշխատանքների կազմակերպում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ 60 մլն. ՀՀ դրամ Ընդհանուր բյուջեն՝ 60 մլն. ՀՀ դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դոնոր կազմակերպությունների ներգրավում, պետության աջակցություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2019թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի խմելու ջրի ջրագծի կառուցումն ավարտին հասցնելը՝ արդյունքում 100%-ով կլուծվի համայնքում խմելու ջրի խնդիրը, որն էլ կնպաստի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը						

Ստորև ներկայացնում ենք յուրաքանչյուր տարի իրականացվող և 2017-2021թթ. շարունակական բնույթ կրող ծրագրերը համառոտ, որոնց առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա ՀՀՀԾ-ում.

- Համայնքի մանկապարտեզին դրամաշնորհի տրամադրում
- Աղբահանության կազմակերպում
- Համայնքի կենտրոնի բարեկարգում
- Սոցիալական օգնության և ուսման վարձի տրամադրում
- Դպրոցին մեկ ամսվա ջեռուցման համար գումարի տրամադրում
- Նորածին երեխաներին միանվագ գումարի տրամադրում
- Համայնքի երեխաներին տարբեր միջոցառումներին մասնակցելու համար ճանապարհածախսի տրամադրում:
- Ծառայությունների մատուցման բարելավում
- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում
- Գիշերային լուսավորություն

4. ՀՀՀԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Առաջնահերթ ծրագրերի ֆինանսավորում

1. Մշակույթի տան դահլիճի և բեմի վերանորոգում և կահավորում՝ ներդրումներ համայնքից և ակնկալվող միջոցներ պետության կողմից
2. Գյուղտեխնիկայի ձեռքբերում՝ բարերարների, դոնոր կազմակերպությունների և պետության աջակցության միջոցներով
3. Մարզասրահի և մարզահրապարակների կառուցում՝ դոնոր կազմակերպությունների և համայնքի բյուջեի միջոցներով
4. Գիշերային լուսավորության լուսատուների փոխարինումը նոր էներգախնայող լուսատուներով՝ բարերարների և համայնքի բյուջեի հաշվին
5. խմելու ջրի ջրամատակարարման համակարգի ներքին ցանցի շարունակության կառուցում՝ Ասիական զարգացման բանկի կողմից և պետության աջակցությամբ

5. ՀՀՀԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀՀԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

ՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
n համայնք
յ21 թթ.)

ն աղբյուրներ			Ծախսերի դասեր		Ֆինանսավորման կարգավիճակ			
Բարեգործություն/ն վիրատվություն	Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորումն առկա է	Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ	Ներկայացվել է ֆինանսավորման հայտ	Ֆինանսավորման հարցը լուծված չէ
			45.5 մլն					լուծված է
			5.0 մլն	65.0 մլն				լուծված չէ
			4.65 մլն					լուծված է
			3 մլն	17 մլն				լուծված չէ

[illegible]

			9.950 մլն	65 մլն				լուծված չէ
		30 մլն		30 մլն				լուծված չէ
			4 մլն					լուծված է

			2.5 մլն					լուծված է

Մ Ո Ն Ի Պ Ո Ր Ի Ն Գ Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Բ

Մարշալու համայնք
2019-2021 թվականներ

Տրամադրանքան մոդի բաղադրիչ	Ցուցանիշի փաստացի արժեք (2015)	Ցուցանիշի կանխատեսվող արժեք (2016)	Ցուցանիշի թիրախային արժեք (2017)	Ցուցանիշի փաստացի արժեք (2017)	Ցուցանիշի կատարողական (2017)	Ցուցանիշի թիրախային արժեք (2018)	Ցուցանիշի փաստացի արժեք (2018)	Ցուցանիշի կատարողական (2018)	Ցուցանիշի թիրախային արժեք (2019)	Ցուցանիշի փաստացի արժեք (2019)	Ցուցանիշի կատարողական (2019)	Ցուցանիշի թիրախային արժեք (2020)	Ցուցանիշի փաստացի արժեք (2020)	Ցուցանիշի կատարողական (2020)	Ցուցանիշի թիրախային արժեք (2021)	Ցուցանիշի փաստացի արժեք (2021)	Ցուցանիշի կատարողական (2021)	Տվյալների հավաստագրման ապրեմանկանություն		Ցուցանիշի ստացման աղբյուր	Ցուցանիշի ստացման մեթոդ	
																		Կիսամյակային	Տարեկան			
Համայնքի կայուն զարգացում																						
Արտադրության շենքի ցածր գնվելով ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների (ընդհանուր թվին կատարողական տոկոսով)	15%		14%	12%		10%			8%			7%			5%			X	համայնքականտարա	Փաստաթղթային ուսումնասիրություն/ի արցազույց		
Համայնքի տնիկական կենտրոնների տարեկան աճ արտահայտված տոկոսով	1%		1.5%	1%		1.5%			2%			2.5%			3%			X	Համայնքականտարան	Փաստաթղթային ուսումնասիրություն		
Համայնքում զբաղեցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, փաշգված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի ապահովում		0%	1%	1%		1%			1%			1%			1.5%			X	ՀՀ Ոստիկանություն, ՀՀ պետ. մեղքատու	Հաղցում		
1. Գյուղատնտ. միջավայրի բարելավում և ձևաաղակադրության կրթական																						
Համայնքում ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվող սուբյեկտների թիվը (սահմանա ձեռնարկատերեր և ձեռնարկատերներ)	8		6	7		7			7			8			8			X	ՊԵԿ տարածքային բաժին	Հաղցում		
Ոչ գյուղատնտեսական բնաշակաւում Գյուղաւ գրավքանության աճ																		X	ՊԵԿ տարածքային բաժին/ԱԿՄ	Հաղցում		
2. Համայնքի զույլ և դրամական միջոցների կատարում																						
Գույքի ինտ գրքաղցմների համադաստիստությունը «Գույքի կատարման միջոցին»																		X	Համայնքականտարան	Փաստաթղթային ուսումնասիրություն		
3. Նախարարության և արտադրության դաստիարակություն																						
Առանձնագված Նախարարության հաստատություն (պլն համայնքներում, դրտիդ աաանին Նախարարական լկա)																		X	Համայնքականտարան	Փաստաթղթային ուսումնասիրություն		
Նախարարության հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի Նախարարական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով	90%		90%	100%		100%			100%			100%			100%			X	Համայնքականտարան, մանկադպրոց	Փաստաթղթային ուսումնասիրություն		
Մարդների թախարակաժողությունը Նախարարական կրթությունը	Թախարակա																					
Արտադրական հաստատություններում ընդգրկված երեխաների թվի հարաբերությունը համայնքի դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով		Թախարակա	Թախարակա			Թախարակա			Թախարակա			Թախարակա			Թախարակա			X	Համայնքականտարան	Փաստաթղթային ուսումնասիրություն		
Մարդների թախարակաժողությունը արտադրական կրթությունը																		X		Արտադրական հաստատություններ համակող երեխաների մարդեր	Հաղցում կամ խմբային հարադպրոց/Գյուղաա խումբ	
4. Աղտիվ մաղկության և մարզական կաղի կաղանկաղումը երեխաաղական կնքաղակաղ																						
Համայնքաղատարանի կաղանկաղական մաղկության միջոցաւումների թիվ	12		12	13		14			15			16			17			X	Համայնքականտարան	Փաստաթղթային ուսումնասիրություն		
Համայնքում գրքիվ մաղկության համայնքի թիվ	1		1	1		2			2			3			3			X	Համայնքականտարան	Փաստաթղթային ուսումնասիրություն		
Մաղկության խմբակներում ընդգրկված երեխաների ու պաաանների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պաաանների թվին՝ արտահայտված տոկոսով	10%		10%	10%		15%			15%			20%			20%			X	Համայնքականտարան	Փաստաթղթային ուսումնասիրություն		
Մարդների թախարակաժողությունը մաղկության խմբակները	Թախարակա	Թախարակա	Թախարակա			Թախարակա			Թախարակա			Թախարակա			Թախարակա			X	Մաղկության խմբակներ համակող երեխաների մարդեր	Հաղցում կամ խմբային հարադպրոց/Գյուղաա խումբ		
Համայնքաղատարանի միջոցներով կաղանկաղական երեխաների ու պաաանների սղկությունը համայնքի դաղա մաղկության զաղանկ	5		15	15		20			20			20			20			X	Համայնքականտարան	Փաստաթղթային ուսումնասիրություն		
Համայնքաղատարանի միջոցներով համայնքում կաղանկաղական մարզական միջոցաւումների թիվ	0		1	1		1			2			2			2			X	Համայնքականտարան	Փաստաթղթային ուսումնասիրություն		
Համայնքային գրաղարանի (ներաղալ էնկաղաղանկ գրաղարանի) աղակաղություն																		X	Համայնքականտարան	Դիտարկում		
Գրաղարանը օգտղղղղղի թվի տարեկան աճ խաղող տարվա համեմատ, արտահայտված տոկոսով																		X	Գրաղարան	Փաստաթղթային ուսումնասիրություն		
5. Համայնքի բնակության սղիաղական աղաղաղություն																						
Սղիաղական մարդերի աղաղություն	աղաղ է	աղաղ է	աղաղ է			աղաղ է			աղաղ է			աղաղ է			աղաղ է			X	Համայնքականտարան	Փաստաթղթային ուսումնասիրություն		
Սղիաղական մարդերի շահաղանների թախարակաժողությունը մարդերը	Թախարակա	Թախարակա	Թախարակա			Թախարակա			Թախարակա			Թախարակա			Թախարակա			X	Հահաղանների ընտրանք	Հաղցում կամ խմբային հարադպրոց/Գյուղաա խումբ		

[illegible]

[illegible]